2011 թվականի հունվար ամսվա ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2011 թվականի պետական բյուջեի հունվար ամսվա եկամուտները կազմել են 57.1 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 36.9 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 31.4%-ով և 17.7%-ով ապահովել են ՀՀ կառավարության առաջին եռամսյակի հաստատած ծրագրային ցուցանիշների կատարումը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 6.9%-ով, ծախսերի գծով՝ 4%-ով:

Նախորդ տարվա հունվար ամսվա համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 11.6%-ով կամ շուրջ 6 մլրդ դրամով, որն ապահովվել է հարկերի, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների 12.9% (6.1 մլրդ դրամ) աճով: Հաշվետու ժամանակահատվածում այլ եկամուտները նվազել են 2.3%-ով, իսկ արտաքին աղբյուրներից պաշտոնական դրամաշնորհներ չեն ստացվել:

Պետական բյուջեի եկամուտների 92.9%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 7.1%-ը՝ այլ եկամուտների հաշվին: <<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 1 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակում ծրագրված մուտքերի 41.7%-ը:

2011 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 44.5 մլրդ դրամ հարկային եկամուտներ ու պետական տուրքեր, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի 31.9%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 10.7%-ով կամ 4.3 մլրդ դրամով: Հարկային եկամուտների աճի վրա զգալի ազդեցություն է գործել

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների, ակցիզային հարկի, շահութահարկի, եկամտահարկի և ռոյալթիի մուտքերի աճը:

Հարկերի և տուրքերի 49.6%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 22.1 մլրդ դրամ և 0.9%-ով կամ 197.6 մլն դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 11.8 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 10.3 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից:

Պետական բյուջեի հունվար ամսվա հարկային եկամուտների ու պետական տուրքերի 10%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 4.5 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 1.4 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 3 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 25.8%-ով կամ 913.2 մլն դրամով, ինչը պայմանավորված է հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված ակցիզային հարկի 3.3 անգամ աճով: Ներմուծման գծով ստացված մուտքերը նույն ժամանակահատվածում գրանցել են 46.1% անկում:

2011 թվականի հունվարին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 12%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 5.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 19.2%-ով կամ 863.5 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 5.2 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 11.6%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 16.4%-ով կամ 727.3 մլն դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են 1.6 մլն դրամ՝ 22.4%-ով զիջելով 2010 թվականի համապատասխան ցուցանիշը:

2011 թվականի հունվար ամսվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 1.4 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով եռամսյակային ծրագրի 32.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 54.5%-ով կամ 499.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է

ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող տուրքերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են շուրջ 1.7 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.8%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7%-ով կամ 124.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր դաշտ անցնելու հանգամանքով:

2011 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 675.4 մլն դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 23.3%-ով կամ 127.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող բնօգտագործման վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 2.1 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 991.6 մլն դրամ են կազմել ռադիոհաճախականությունների թույլտվության տրամադրման վճարները, 511 մլն դրամ՝ <<Կոնցեսիայի մասին>> ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 180.2 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 157.7 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 104.7 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 85.7 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 6.6 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 56.2 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է ավելի քան 3.8 անգամ կամ 1.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի գծով մուտքերի աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 8.5 մլրդ դրամ՝ 29.9%-ով ապահովելով եռամսյակային ծրագիրը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ

պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 25.9%-ով կամ 1.8 մլրդ դրամով:

2011 թվականի հունվարին պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 4.1 մլրդ դրամ և 59.8%-ով ապահովել եռամսյակային ծրագրի կատարումը: Նշված համեմատաբար բարձր ցուցանիշն ապահովվել է հիմնականում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք գերազանցել են առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշները: Այլ եկամուտների գծով մուտքերից 989.5 մլն դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց ծրագիրը կատարվել է 39.5%-ով: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 2.3%-ով:

2011 թվականի հունվարին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 36.9 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով եռամսյակային ծրագրի 17.7%-ը: Մասնավորապես՝ շուրջ 35.2 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 1.8 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու տարում 362 մլն դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին՝ կազմելով ծրագրվածի 14.2%-ը, որոնք ներառվել են պետական բյուջեի ծախսերում՝ համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերը նվազել են 4.4%-ով կամ 1.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հիմնական միջոցների և պետական հատվածի այլ մակարդակներին հատկացվող դրամաշնորհների գծով ծախսերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու տարում կազմել են 2.6 մլրդ դրամ՝ 18.4%-ով կատարելով եռամսյակային ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 1.4%-ով կամ 476.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված կենսաթոշակների, նպաստների, աշխատավարձի գծով ծախսերի, ինչպես նաև այլ ծախսերի աճով: Ընթացիկ ծախսերից 2.6 մլրդ դրամ տրամադրվել է պետական

հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 51.2 մլն դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի համապատասխանաբար 16.1%-ը և 4.5%-ը: Նախորդ տարվա հունվարի համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 24.4%-ով և 86.1%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 340.6 մլն դրամ, որը 27.6%-ով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու տարում 1.8 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 21.9%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 1.4 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 367.7 մլն դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2011 թվականի հունվարին պետական պարտքի սպասարկման ծախսերը 3.4%-ով զիջել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը տեղի է ունեցել ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի նվազման հաշվին:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 274.3 մլն դրամի սուբսիդիաներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 6.6%-ը և 13.8%-ով զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Շուրջ 3.5 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 3.3 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 187.5 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 2.7 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք պահպանվել են նախորդ տարվա մակարդակին:

Հունվար ամսվա պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 56.6%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 19.9 մլրդ դրամ՝ 29.3%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը և 8.8%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես՝ 15.4 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 4.5 մլրդ դրամ՝ նպաստները: 2009 թվականի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն ավելացել են 5.7%-ով, իսկ նպաստների ծախսերը՝ 21%-ով:

2011 թվականի հունվար ամսվա ընթացքում պետական բյուջեի միջոցներից 6.8 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 9.8%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 1.8 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 10.4%-ը: Նախորդ տարվա հունվարի համեմատ նշված ցուցանիշը նվազել է 54.9%-ով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների գծով ծախսերի նվազմամբ:

2011 թվականի հունվարին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 20.1 մլրդ դրամ հավելուրդով՝ առաջին եռամսյակում նախատեսված 26.7 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ներքին աղբյուրների գծով հավելուրդը կազմել է շուրջ 16.9 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման գծով՝ 3.3 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 4.1 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից մուտքերը, որը ստացվել է գանձապետական պարտատոմսերի թողարկումից: 2011 թվականի հունվարին պետական բյուջեի ազատ միջոցներն ավելացել են 20.9 մլրդ դրամով՝ առաջին եռամսյակում նախատեսված 28.1 մլրդ դրամ օգտագործման փոխարեն:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -3.3 մլրդ դրամ, որից 3.2 մլրդ դրամը տրամադրվել է ԼՂՀ-ին որպես միջպետական վարկ: 144.4 մլն դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների՝ Համաշխարհային բանկի նկատմամբ պարտքի մարմանը:

Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 49.1 մլն դրամի վճարում, որը նախորդ տարվա պարտավորությունն է, և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար ամսին: